Սևծովյան ափամերձ տարածաշրջանի մոնիթորինգ և բնապահպանական խնդիրներ, դրանց լուծման տարբերակներ

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ ՝	Բնապահպանություն
Տևողություն ՝	24 ամիս
Իրականացման ժամանակահատված ՝	փետրվար 2013 – հունվար 2015
Ընդհանուր բյուջե ՝	1,070,157 եվրո
ՀՀ շահառու հաստատություն՝	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
Մասնակից երկրներ՝	Հունաստան, Հայաստան, Վրաստան, Թուրքիա

Ծրագրի նկարագրություն

Ընդհանուր նպատակները ՝ Հստակեցնել Սալոնիկի, Տրապիզոնի և Թբիլիսի նավահանգիստների առջև ծառացած հիմնական խնդիրները և զարգացնել կառավարման գործիքներ՝ ունակ կրճատելու տարածաշրջանային տեղեկատվության ծավալները տեղական խնդիրների լուծման համար և մեծացնելու տեղական դաշտային տվյալների ծավալը՝ տարածաշրջանային տեղեկատվական ծառայությունների հիմք ստեղծելու համար:

Ձեռք բերված արդյունքները ՝

- Իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել բացահայտելու ծովամերձ տարածքներում էկոլոգիական իրավիճակների վատթարացման պատճառները և մշակելու առաջարկություններ ռիսկերի մեղմացման համար,
- Ծովամերձ տարածքների էկոլոգիական վիճակների վերլուծության արդյունքում բացահայտվել են գետաբերաններում առկա վատթարացումների պատճառները, մշակվել են ընթացող երևույթների վերծանման մաթեմատիկական մոդելները, որոնք հնարավորություն են տվել գնահատելու սպառնացող վտանգները,
- Մշակվել են այդ վտանգները մեղմացնելու առաջարկություններ,
- Աշխատանքային խումբը գիտական զեկույցներով հանդես է եկել նախատեսված աշխատանքային սեմինարներում, որոնք կայացել են գործընկեր երկրներում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում, Թուրքիայի

Տրապիզոն քաղաքում, Հայաստանի Երևան քաղաքում և Հունաստանի Սալոնիկ քաղաքում,

- Կատարվել են փոխադարձ այցելություններ Վրաստանի Թբիլիսի քաղաք, որտեղ քննարկվել են Ծրագրի շրջանակներում ստացված գիտական ձեռքբերումները:

Հավելյալ տեղեկատվություն

Սևծովյան ափամերձ տարածաշրջանի մոնիթորինգ և բնապահպանական խնդիրներ, դրանց լուծման տարբերակներ (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-1872.pdf)